


9. Կը գանուին դարձեալ այնպիսի բա-
ռեր և որոնք սովորաբար գործածութեան մէջ
չեն, ինչպէս քոյշատրել, շարունակային,
ձախային, ինքնակենսագրոտրիան, խոզախ-
տառոր (լաւ կ'ըլլար քովը դնել ասոր գաղ-
ղերէն բառը), դրօշակակիր (սխալ է, պէտք
էր ըսել դրօշակիր), և այլն: Իսկ այն ար-
հիարարարոտոտրիան բառը (128 էջ) այնքան
խորթ և խրթին է, զոր միայն արհիարտեղ
բառով կարելի է բացատրել:

Չանց ընելով ասոնց նման ուրիշ բառեր
և պարբերութիւններ, որոնք — բիշ մը վեր,


բիշ մը վար — այսպիսի գիտողութեանց սահ-
մանէն անպիսի չեն անցնիր և միւս կողմանէ
ալ գրքին ամբողջութեան փաստ չեն բերեր,
կը վերջացնեմ խօսքս՝ գովելով թարգմանչին
ընտրութիւնը և աշխատութիւնը, որ կըցեր
է մեր հասարակութեան այսպիսի կարեւոր
ծառայողութիւն մը մատուցանել, և քաջայերեւ-
ում միանգամայն որ ապագային մէջ ալ —
այս մի քանի գիտողութիւններէն լքանելով —
ձեռնթափ չըլլայ այդպիսի գործերէ, յիշելով
լատին առածը որ կ'ըսէ. « Errando di-
scitur. Միայնելով կը սորուեցուի »:

Հ. Յ. Թ.



Կ. ԿԱՆՏՈՒԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Խտայացոյ մը խորհրդածորիաններ)



Ի՛նչ նախելի էղիպտացեաց քաղա-
քային օրինաց 'համեմատ' հիմայ ալ
սովորութիւն ըլլար մերթ ընդ մերթ ի
ձայն քաղահնոյդ փողերու՝ մեռեալները
դատելու կողմէ զօղովուրդն, որպիսի և
նորչափ բողբոսութիւն պիտի հաւաքուէր՝ վաղը
կամ միւս օր, Կեսար Կանտուի գազաղին
շարիլը:

Ամենէն առաջ պիտի վաղէին մանկունք՝ ի-
րենց նախնական դաստիարակութիւնը՝ իրեն
յօրինած տարրական գրքերովն ընդունողք, ո-
րոնցմով վաթսուս տարի յառաջ կը շնար տը-
պաւորել անոնց մօրքին մէջ այն դաստիարակա-
կան և հրահանգական նորութիւններն և ուղ-
ղամտութիւնը, որոնց վրայ նորերէն՝ մեր ժա-
մանակակից հետեւակ անձերէ, այնչափ շատ-
շատայն աւելորդաբանութիւններ կը լսենք:

Մանկանց պիտի հետեւէին աղնուսասուն կա-
նաք՝ որոնց կէս դարէ ի վեր սիրտը յազած է
իր վէպերով և Մարգարիտա Պոստոնրա վիպա-
սանութեամբ:

Պեղիկաց և գործաւորաց համար՝ ինքն եղած
է առկիներէն մէկը՝ պարտուց աշխուականու-
թիւնն և իրաւանց մեծփայելութիւնն ճանչը:

Նոյ՛ Ոմերոնոյ առակախօս, Կարողու մեծեկէք-
քիացի, Ուղղամիտ և բարեսիրտ, Գործաւորի մը
քղրապանակը, Չգոչուրիան, և ասոնց նման գրը-
քայիներով, որ ոսկեղէն բովք են մանաւանդ
օգտակար հմտութեանց, գործնական վարդա-
պետութեան և բարոյական ու քաղաքական ի-
մաստութեան:

Սկսած գիտունք, բանասէրք և արուեստագէտք,
որոց լոյս եղաւ և ուղեցոյց՝ հին և նոր գիտու-
թեանց բաւզին մէջ:

Եւ ի վերջէ՛ պատմական աղնուսպետութիւն
նահապետաց և իշխանաց, կայսերաց և թագա-
ւորաց, բռնաւորաց, սրբաց, դիւցազանց, քա-
հանայապետաց, հերետիկոսաց, փիլիսոփայից,
որք պատմութեան վեց հազար դարերու շրջա-
նին մէջ՝ խորունկ հնաք մը թողին երկրիս առլ-
մին վրայ:

Առեւք ամենքը, չի տարակուսինք ամենեւին,
առաջի այս պատմաբանին, քննադատի, իմաս-
տասիրի և դաստիարակի, չունին ուրիշ խօսք,
ուրիշ ձայն՝ բայց եթէ զայն՝ զոր մեք այսօր կը
հռչակենք թէ

Պատուեալ ամենամեծ Ուսուցիչը:

Վասն զի կրնայ ըսուիլ թէ Կանտու ապրեցաւ

ստրվեցընելով միշտ, ամէն բան և ամենուն, նման անոր որ կը տեսնէ՝ ուղղութեամբ կ'ուզէ և կը սիրէ գործովը, օրինակաւ, գիւցաղական յարասեւութեամբ և անբամբաս վարութիւնը:

Գրական հասարակութեան մէջ չիկայ մէկը, մեծ կամ պզտի, որ իրեն պարտապան չըլլայ՝ ժանտութեան, տեղեկութեան, հմտութեան մը, կամ որ և իցէ հրահանգութեան կամ վաւերականի:

Իր գլխաւոր երկասիրութենէն, որ տասն անգամէն աւելի հրատարակութիւն ունի բնագրին, (Քնդհանուր Պատմութիւն) և իմաստուն աշխարհի գրեթէ ամէն ինքզնով թարգմանուած, իբրև յառատարուղի աղբիւր՝ յառով եկան ապա զրոյաց և զրակաց ձեռքով բազմաթիւ գրքեր և զբնական, որոյ հեղինակը — ինչպէս սովոր են այսօր աշխարհիս երեւոր ամէն պարտապանը — չէ թէ միայն պարտատիրով նորահալակութիւն չեն մատուցաներ, այլ բարեկէն անգամ կը կարեն իրով: Վասն զի և այս ստոյգ իրականութիւն մ'է, որ ինչպէս անպակաս են սրգէն և ամենուն ժանտութիւն՝ պատառաբայութիւն և քսակահատք, այսպէս կան նաև մտաւոր հացկատակք և մակարոյթք:

Բայց այս ալ կայ որ մեծերու արտառնութիւն մ'է բարեխալութիւն սերմանել, ապրիստութիւն և թշնամութիւն հնկելու համար, և որուն կանտու՝ իր իննամասնայ հասակին, արդէն վաղուց վարժ է և համակերպած:



Հայրենեաց համար, որոյ սէրը հազարներու բերնին ու տասանց միայն արտին մէջ է, ինքն զգաց զայն, մտածեց և գործեց իբրև Նշմարիտ Հայրենեաց սիրող, անկեղծ և յարատևող:

Առաջիններէն եղաւ, ի համարձակողաց Իտալիոյ անունը բարձրաձայն հռչակելու, երբ վեցերորդ օրուան կարծեցեալ դիւցազունը հազիր թէ կը համարձակուին գոյնքերին նետելով կամ զոգրողայով թոթովն այդ անունը:

Ինքն դպրոցի մէջ, սիրոյ ծաղկանց հետ, առատ ձեռքով կը ցանէր՝ իտալեան ուժով սերմեր, որ քիչ ետքը՝ իտալական արեամբ ցօղեալը, արգասաւոր պիտի ըլլային:

Այսպէս համարձակ յառաջելով երբ կը փընտռէր Հայրենեաց ազատութիւն, գտաւ ինքզինքն բանտի մէջ:

Սակայն զաղաքագիտութեանը մէջ սխալած տեսլանցաւ, ուր մանաւանդ պէտք էր ըսել թէ բազմութեան պատրանաց կամ կուրսութեան ատեն, ինքն՝ կորովաբիր և արատես, բարձրէն

գիտելով տեսաւ, թէ յանուն Հայրենասիրութեան՝ կը մնասին Հայրենիք, յանուն գիտութեան կը նախատեսի խրիճ, որով յանուն ազատութեան՝ կախաղանի կը հանեն զազատութիւն:

Իւ կանտու՝ այնչափ մեծ որ չէր կրնար ուրիշներու հետ ծոխի և խոնարհիլ, այնչափ իմաստուն՝ այդ պատրանաց թակարդին մէջ չիշնայու, քիչերու հետ՝ որ միշտ ընտրեալացն են, մէկդի քաղուեցաւ, կամ մինակ մնաց՝ ինչպէս միշտ ամէն զօրաւորը. վասն զի առիժք և արծիւք միայն են որ մինակ կը մնան:

Աշխարհիս մէջ հաճոյ ըլլալու համար՝ զամէնքն հանեցընելու է, իրեքրը գգուելով, ուրիշի ունայնասիրութիւններն գրգռելով, կամ որ և իցէ կերպով՝ հրապարակաց վրայ ժողովորդը յաղելով՝ նորեղակ այնպիսի խաղերով որ շատախալ խաբեբայից գործածած բոժոժից ձայնին նման ի մի կը հաւաքեն զանմիտ հանգիստառես:

Հաճոյանալու փոյթը կամ տհանելի երևնալու երկիւղը՝ ընդհանրապէս մտաւորական ոչընչութեան կամ սրտի աղքատութեան նշան է՝ որ ինքզինքն բան մը կարծելու համար ուրիշ խաղեր կամ ձայնին կը կարօտի. ուր բարձր և ազնուական հանճարը՝ միշտ վեր կը բանայ և ոչ երբէք ցած կ'իջնէ. ընդդիմանալով շար կամ և անմիտ ընկերաց:

Այսպէս ըրաւ միշտ կանտու, և այն պատճառաւ տհանեցուց ... զով

Ձանձը ամէնքը՝ որ ազնուամիտ մարդու մը ներկայացուցած պատմութեան կենդանի լուսնէ կը խորին վախով:

Սակայն և այնպէս ինքն շարունակեց՝ ինչպէս որ սկսած էր, կռուելով միշտ բռնութեան դէմ, ըլլայ արքունական կամ ժողովրդային, կուսակցութեան, աղանդի կամ դպրոցական, ազատ մարդու անկեղծութեամբ. քրիստոնէի քաղաւորութեամբ և անկուսն ուղղախոհութեամբ:

Ոչ զի ի բազմաթիւ ընկերակցութեանց՝ որ կը վխտան այսօր յիտալիա, փոփոխակի գիտար խնկելով, ու երկրին մոտաւոր ու բարոյական հորիզոնը անպակասելով, ոչ զի իշխեց կանտուի անաշատ անձնաւորութիւնը ինկելու մտենալ:

Վասն զի ինքն անոցմէ չէր՝ որ այդպիսի միջոցներու կարօտ ըլլան բարձրանալու համար. և երկրորդ՝ զաղաքական կարող բարոյականին հպատակեցընել ուղելովը. կուսակցի երեցաւ այնպիսի անձանց աչիւն՝ որ ամէն բան կը հրապարակեցընեն... իրենց կուսակցութեան:

* *

Արդի կիպելլեան խառնույն պիգմէից անթիւ բազմութիւն իրարու ծանօթացան, խօսքը մէկ ըրին, ու անտարբերութեամբ, լուսթեմմի կամ մոռացութեամբ ուղեցին դարան գործելու կուել-
փեան հակային դէմ. ինչուան քանի մը դպրոց-
ներէ նետեցին դուրս թափեցին իր զրգերը, թերեւս այն պատճառաւ որ անոնց մէջ գլխա-
գորով տպուած տեսան Աստուծոյ անունը: Թու-
թակի պէս այն գրուածոց վրայ կը խօսէին՝
աստիճանաւորաց և պատուանշաններով զար-
դարուած ամբոխ մը, առանց զանոնք կարդա-
ցած ըլլալու: Եւ թէպէտ իւր հայրենիքն կը լը-
ռէր, ինչպէս ցայսօր կը լռէ, բայց կը խօսէր
ինքն, ինչպէս կը խօսի ամբողջ քաղաքակնա-
ցեալ աշխարհ, գրեթէ ամէն լեզուաց թարգ-
մանութեամբ: Աւ երբ ուրիշ հողով մը շնչելով
ցրուէ ներկայ շրջնիւնը, ինքն պիտի չարունակէ
խօսիլ վեհագոյն ուսուցչի և դաստիարակի ձայ-
նով: Թէ որ կենդանութեան ատեն պակեցաւ
իրեն, ինչ որ հնչեաւ և ամենամեծ դիւրու-
թեամբ ձեռք կը ձգեն շափաւորք կամ աննը-
շանք, Կանտու այն միակ՝ պատիւն ունեցաւ՝ ու
րով կը վարձաւորէ աշխարհ զգերագոյն տննա-
ւորութիւնն. — Կուսակազմութեան աստիճանա-
Վակայն հանգիստ և իր սկզբանը հաւատարիմ
պիտի կնքէ կեանքը՝ առանց արտասուաց և յա-
ռապունանաց ամօթոյ, ի լուր ձայնի աքաղա-
ղի, — ի մէջ այնչափ ուրացողաց և ուրացու-
թեանց:

* *

Սիրով և սիրոյ բուռն գմայլմամբ իւր վը-
րայ խօսելէն ետքը, մօտենանք արդ՝ ոչ առանց
խոնարհ մեծարանաց, նկատել գինքն իրրե մա-
տենագիր:

Քանաքէն աւելի աղտոտող նիւթ չկայ, ասա-
հակ աղու մը, տգէտ դպրի ու անհաւատարիմ
պատմագիր ձեռքին մէջ: Որովհետեւ գրած
խօսքը՝ ոչ է ձայն որ կը ցրուի պարագայութեան
մէջ, այլ մտքովային մտածութիւն է, որ գոյու-
թիւն, կեանք և մշտնջենաւորութիւն կ'առնուի:
Սակայն եթէ անկորուստ բան մը կայ զոր
հանճարը կը թողու իրմէ ետքը, գիրքն է:
Կրնան անհետանալ նկար, արձան, չինուածք,
որովհետեւ ժամանակն մեծութիւն է նիւթոյ յաւիտենական
մենամարտին մէջ՝ յաղթականը միշտ ժամա-
նակն եղած է:

Բայց գիրքը չի կորսուիր, քանի որ կը բազ-
մապատկուի տպագրութեամբ, կը նորոգուի,
կ'անհետանայ դարձեալ երևնալու համար, —

լուսաւոր երեւոյթ մը խոհական աշխարհին մէջ,
ինչպէս գիտաւորը ի բնական աշխարհի:

Ամէն գրքէ աւելի կեանք ունեցողը՝ անտա-
րակոյ պատմութեանն է, որ ստոյգէն բաւ-
լով լսի գրքէ մը տակի բան մ'է. մնայուն դա-
տարան մը: — Արուեստէ ալ լուսագոյն է. քա-
ղաքական պատմութեան մը, որուն մերձեցողը՝
ինչպէս քահանայն խորանին՝ պէտք է յառաջա-
գոյն մաքրուի:

* *

Քաղաքագէտ մը ըսած է. թէ պատմութիւնը՝
դաւաճանութիւն մ'է նշմարտութեան. և փր-
նեստոյցի տարօրինակ հանճարոյ մը խօսքն է.
Թէ պատմութեանց մէջ թուականներէ դատ
նշմարիտ բան չի կայ, եթէ անոնք ալ չիւր դը-
րուած են:

Երկուքին խօսքն ալ թէպէտ չափազանցու-
թեամբ զուրցուած, բայց տպացոյցք են՝ թէ
պատմութիւն մը, եթէ գրուի ինչպէս որ ար-
ժան է՝ խղճմտութեամբ, հանճարոյ արտա-
գրութեանց մէջ դժուարագոյնն և ամենէն փա-
փուկն է, այնպէս որ կասկածի ալ չկարենայ
ենթակայ ըլլալ, ինչպէս օտոբիոգրիւն էր ը-
սուիլ Կեսարու ամուսնոյն համար: Ինքն Ն.
Մակկիաւէլլի կը զգար պատմութեան այս
մեծվայելութիւնը, և փառաց և շքոյ զգեստը
վրան կ'առնուր, ինչպէս որ կ'ըսէր, երբ մե-
ռելոց հետ պիտի խօսէր. որ՝ զի ոչ կրնան խօ-
սիլ, ոչ ինքզինքնին պաշտպանել, անոնց յիշա-
տակին եղած որ և իցէ մեծարանք և խոհա-
կանութիւն՝ ոչ շատ է և ոչ չափազանց:

Գողաղով ուրեմն գրիչը ձեռք առնու պատ-
մագիրը, մտածելով թէ չկայ մեծագոյն նախա-
տիւք՝ ինչպէս թանաքի աղտ մը դրոյմով մեռե-
լոյն ճակտին վրայ:

* *

Ինչ նշգրիտ նշանակութիւն ունի՝ պատմա-
թիւն մը գրել ըսելը: — Պատասխանելը դժուա-
րին է:

Արդեօք օտոյգ դիպաց պատմութիւնը: — Սա-
կայն... երբեմն լրագրողք ալ կ'ընեն զայն:
Ճամանակաց, օտոբիոգրեանց, դիպուածոց և
կենաց նկարագիրը: — Այլ կ'ընեն զայն նաև վի-
պասանք և առակախօսք:

Միթէ դուրսհանել, թաքուն մնացած վաւերա-
կանք: — Միւրեք ալ կը յաղդին մերթ առ այդ:
Առնք ամէնքը պատմիւն միաքն ու կամքն
են, բայց չեն արուեստ պատմագրութեան:
Սառաքել գէպքեր, խելամալել անոնց: քննա-

զատութեան մարդէն անցընել ուղղութեամբ, յարգել, ճշդութեամբ կարգաւորել, ոճով հրապարակ հանել... ահաւաստիկ արուեստը, բայց ոչ քաղաքական պատշոնատեղին:

Պատմութեան արուեստը, քաղաքական պաշտոնավայրը և փառաւոր մեծվայելչութիւնն է՝ հիմարտութիւնը փնտռել սիրով, բացատրել խղճմտութեամբ, հրապարակել անկեղծութեամբ և զարգարել զայն շնորհալի գեղով. իմաստաւ սիրարար քննելով գործերը, քաղաքագիտաբար՝ իրերն, գիտնաբար՝ երևոյթներն, և այս վախճանիս հասնելու համար՝ օրտից ծածուկ ձայնին մտիկ ընել, արթնցնելով ժամանակի և միջոցաց մեռեալ ու գերեզմանաց խորը մոռցուած ամէն լուին արձագանք, յիշատակարանաց և դիւանաց, անցելոյն ցուրտ շնչերէն հանելով դատարարակիչ և կենդանաբար հրահանգութիւններ:

Այսօրինակ աւաստիկ զգաց, մտածեց և գործեց կեսար կանառ:

Երբք գրութիւնք կան զօրս Կալիստոսի տոյն տեսնելով՝ Հայարտութիւն մը կ'իմանամ իսաւրացի ըլլալու, բարեբաստիկ՝ խելամոտութեան համար, և գիտակցութիւն՝ աննշան ոչնչութեան:

Այս գրքերն են՝ Դանտէի Գոասանդոպրիմն, Մանտոնիի Վիդասանտրիսը, և Կանտուի Տիեզերական պատմութիւնը: Արիւնիքի նման՝ արեւկան ու համարձակ ոճ մը, և առիւծային անհամբերութիւն ունի Կանառու. ու իրեն բարեկամ Մանտոնիի՝ արգի զուրջուածքի սահուն, ախորժական և ազատ կերպը. երկուքին ալ

զեղեցիկ, անմատաւար և քաղցրօր՝

յաղթանակաց վարձ կառաւորը:

և եթէ Աստուածային գոասանդոպրիսը՝ քերթողական աշխարհ համարինք ? Խոսեցնալքը բարոյական աշխարհ, Տիեզերականն կանտուի է պատմական աշխարհ: Երբք մէկտեղ կը կազմեն գերեւակայութիւն, զներկայացուցումն և զիրականութիւն:

Արուեստից ընտիր ախորժակաւ և քննադատի ուղղախոհութեամբ ճանչցաւ Կանտուի է Պատմութեան մուսայն, — օր ընդհանրապէս խիստ է և պահանջող, — արդի ժամանակաց ներկայացնելու համար, — պէտք ունէր ոչ միայն յատուկ գրականական դատարարակութեան մը, այլ նաև արուեստական արժուագործի:

Կանտուի գրաւորական գործունէութիւնը հիանալի է արդարև, ոչ այնչափ արտագրու-

թեանց թուովը և չափով, — զի յետին օրս գրողն՝ լոկ գրելու համար, իրմէ աւելի կը գրէ այսօր, — այլ երկասիրութեանց զանազանութեան և ընդհանրութեամբ: Անգլիացու հաստատմութիւնն ունեցաւ, գերմանացու համբերութիւն, գաղղիացու արագութիւն և խառնական շափ. որով յաղեցցաւ անհուն դժուարութեանց մէջ՝ ձեռնարկել և ի գլուխ հանել գերմարդկային՝ տրտմանական գործ մը, որուն վրայ՝ իրբն ի վերայ պատուանդանի, յաղթականի մը պէս պիտի մնայ միշտ կանգուն և մեծ:

Հոգեկան աշխարհի լոյսն է միտքը, ունի ինքն ալ իր հաստատուն աստեղը, մուրակներն և արբանեակը:

Խալսիլոյ գեղեցիկ երկերին տակ՝ մերթ ընդ մերթ առակին կարգի արեգակունք կը ծագին, որ իրենց ճառագայթներով կը լուսաւորեն՝ քաղաքակրթութեան ու յառաջդիմութեան Յարգողի հետոց վրայ եղող ստուերամած մուրակներն և մուրացիկ արբանեակներն:

Եթէ հեթանոսական հնութեան մէջ, աւր լորտվին հօրաց անձնասիրութիւնն է և զօրաւորաց անքանութիւն, կը փայլի քաղաքային գիտութեան կամ աշխուական արուեստի ճառագայթ մը, Վիրգիլեայ՝ Որատիտի և Արիստոի խալսական լոյսն է:

Եթէ միլին դարուց խաւարին մէջ՝ մարդկութիւնը չի կորսուիր, շնորհք է Սրբին Քովմայի իմաստասիրութեամբ ծաւալած լուսոյն, Դանտէի բանաստեղծութեան, Արոգոյի արուեստին և Կլոմբոսի հանճարեղ հեռատեսութեան:

Եթէ արդի ժամանակը այնքան յառաջդեմն և արուեստի, գիտութեամբ և զրականութեամբ, նաև այն արդիւնք է իտալեան աստեղաց որ Բուռնարոտտի, Սանտիլոյ, Արիստոյ, Գալիլէոս, Գալուսի, Մետաստասիոս և Ռոսսինի կը կոչուին:

Եթէ դարուս սկիզբը՝ ժամանակակից աշխարհը անասուն կը մնայ՝ մինչև այն ատեն չի տեսնուած ընկերութիւն ու քաղաքային ամենամեծ յեղափոխութիւնէ մը, պատճառը՝ իտալեան աստեղ մը անցնէն էր, որ Նապոլէոն անունն ունէր:

Տարակոյս չի կայ որ անթիւ մենքնայս կը հնարէ այսօր Ամերիկա, և երկարութեամբ բուրբ աշխարհ իրարու հետ հաղորդակցութեամբ մէկ քաղաք մը դարձած է, բայց առաջին կայծը իտալական հանճարոյ գիւտ է. Վալտայի՝ երկարականութեան Պրոմեթէոսն:

